

ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՊՈՍՏՍՈՂԵՌՆԻՋՄԻ ՓԻԼՍՈՓՈՒՅԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ

Ե. Է. ԹԱՂԵԿՈՍՅԱՆ

Մարդկային քաղաքակրթության զարգացման ներկա փուլում ընթացող բարդ և բազմաբովանդակ գործընթացներն արժևորվում և իմաստավորվում են նաև պատմափիլիսոփայական ու տեսական-մեթոդաբանական վերլուծությունների տեսանկյունից: XX դարի վերջին և XXI դարի սկզբին համամարդկային, քաղաքակրթական, ինչպես նաև հասարակական ամենատարբեր ոլորտներում առկա ճգնաժամային իրավիճակների առկայությունն առաջ է բերել դրանց դրապատճառների բացահայտման անհրաժեշտություն: Ուստի փիլիսոփայության այսօրի հիմնախնդիրների շարքում հրատապ է դարձել մարդկային քաղաքակրթության անցած ուղու քննական վերլուծությունը, ինչը, անշուշտ, հնարավորություն կընձեռնի համամարդկային հետազազարգացումների մասին ճիշտ եզրակացությունների հանգեցում: Մուտքը մոր հազարամյակ ստիպում է վերանայել մարդկության անցած ողջ ուղին՝ սկսած վաղնջական ժամանակներից, երբ մարդն իր կեցության ապավենն ու երաշխիքը փնտրում էր գերբնական ուժերում, մինչև այսօրվա՝ գիտության միջոցով բնությունն իրեն ենթարկելու հնարավորություն որոնող քաղաքացին: Ըստ էության սա մարդու՝ որպես բանական էակի կազմավորման գործընթացի վերլուծություն է, ինչը խնդիր ունի բացահայտելու, թե որքանով է այն նպաստել մարդկության բարեկեցիկ կյանքին և բարոյաև հոգեբանական ու նյութական բարօրությանը: Այս տեսանկյունից ժամանակակից փիլիսոփայության մեջ կարևոր տեղ է հատկացվում հասարակական և քաղաքակրթական զարգացումների մեջ որոշիչ դեր ունեցող փիլիսոփայական հարացույցների ուսումնասիրությանը: Հետադիտական փիլիսոփայության շրջանակներում հատկապես կարևորվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտների ռացիոնալացման պահանջով հանդես եկած լուսավորականության վերաբերման և վերաիմաստավորման անհրաժեշտությունը: Լուսավորականության ակունքներին, ծագմանը, գործառնությանն ու նպատակներին վերաբերող հարցերը դեռևս լայն քննարկումների ու տարատեսակ մեկնաբանությունների առիթ են տալիս: Ժամանակակից փիլիսոփայության և մշակութաբանության դիրքերից կարող ենք առանձնացնել «լուսավորականություն» հասկացության ռեֆլեքսիվ արտացոլման հետևյալ երեք մակարդակները:

ա) Նեղ իմաստով «լուսավորականությունը» նշանակում է եվրոպական մշակույթի զարգացման պատմական որոշակի շրջան՝ սահմանվելով որպես «Ֆեոդալիզմի քայքայման և կապիտալիստական հասարակության հաստատման դարաշրջանի քաղաքական գաղափարախոսություն, փիլիսոփայություն և մշակույթ»¹:

բ) Առավել լայն իմաստով «լուսավորականությունը» հանդես է գալիս որպես մտածողության և փիլիսոփայման ինքնատիպ միջոց: Այս տեսանկյունից որպես

¹ «Философский энциклопедический словарь». Под ред. Л. Ф. Ильичева. М., 1983, с. 540.

լուսավորիչներ են հանդես գալիս թե՛ Սոկրատեսն ու Խորենացին, թե՛ Մոնտեսքյոն ու Վոլտերը, թե՛ Մարքսն ու Պուպպերը: Վ. Սոկոլովը գրում է. «Մենք սովորել ենք խոսել Լուսավորականության դարաշրջանի բուրժուական բովանդակության մասին՝ որպես XVIII դարի գրեթե համաեվրոպական գաղափարա-փիլիսոփայական երևույթի: Բայց այդ դարի բուրժուական լուսավորիչներից ոմանք (օրինակ՝ Վոլտերը) հնարավոր էին համարում խոսել հնադարում լուսավորականության որոշ ժամանակաշրջանների մասին»²: Այստեղ «լուսավորականություն» հասկացության ներքո նկատի է առնվում խավարամտությանը, տգիտությանն ու սնահավատությանը հակադրվող գործունեությունը: Եթե այսքան լայնորեն մեկնաբանենք «լուսավորականություն», «լուսավորիչ» հասկացությունների իմաստը, ապա համաշխարհային պատմության մեջ, իրոք, կարող են դիտարկվել լուսավորական տարբեր դարաշրջաններ: Այս կապակցությամբ Գ. Ա. Մելքումյանը գրում է. «Յուրաքանչյուր ժողովուրդի կյանքում լինում են պատմական զարգացման որոշակի փուլեր, որոնց բովանդակությունն է կազմել լուսավորականությունը՝ այս բառի լայն իմաստով և ընդգրկմամբ: Հաճախ դա պայմանավորված էր գիտության, մշակույթի, կրթության զարգացման, ինչպես նաև ազգային ինքնագիտակցության զարթոնքի անհրաժեշտությամբ»³: Լուսավորականության փիլիսոփայության ժամանակակից գիտակներից Վ. Պուստարնակովը, անդրադառնալով «լուսավորականություն» հասկացության լայն իմաստին, ասում է. «Այս դեպքում այն գիտական գիտելիքի և մուլմիսկ, առհասարակ, գիտելիքի ջատագովների կողմից ստեղծված անսահման մի տարածություն է, որոնք գործել են այս կամ այն ժամանակաշրջանում, և հարկ չկա նրա շրջանակները նեղացնել մինչև միանգամայն որոշակի փիլիսոփայական մշակույթ»⁴:

գ) Փիլիսոփայական մտքի շրջանակներում հաստատված մեկ այլ պնդմամբ «լուսավորականություն» հասկացությունը հանվում է պատմական համատեքստից, որին պարտական էր իր ծագմամբ, և մեկնաբանվում խիստ լայն իմաստով, այսինքն՝ առաջին հերթին ոչ թե որպես մարդկության պատմական զարգացման որոշակի փուլ, այլ որպես առհասարակ մշակույթի և քաղաքակրթության զարգացման գործընթաց: Լուսավորականություն հասկացությունն այս իմաստով է մեկնաբանվում ֆրանկֆուրտյան դպրոցի խոշոր ներկայացուցիչներ Մ. Հորքհայմերի և Թ. Ադոռնոյի կողմից, ովքեր հիմնախնդրի հետազոտության մեջ շեշտը դնում են քաղաքակրթական պատմության մեջ բանականության ինքնիրացման գործընթացի համատեքստում նրա էության լուսաբանման վրա: Այս իմաստով լուսավորական միտքը կարծես ամփոփում է այն գաղափարները, նորմերն ու սկզբունքները, որոնց շնորհիվ մարդկությունը դարերի ընթացքում մտածում էր ստեղծել քաղաքակրթություն և ազատվել բարբարոսությունից: Ընդամենը, հասկացության այս իմաստում ամփոփվող մարդկության բազմադարյան զարգացման արդյունքները դրականորեն չեն գնահատվում Թ. Ադոռնոյի ու Մ. Հորքհայմերի կողմից: Նրանք հոռետեսական վերաբերմունք են ցուցաբերում մոդեռնիստական մախազծի նկատմամբ՝

² В. В. Соколов. Соотношение античных и средневековых мотивов в толковании предмета философии Давидом Непобедимым. - В кн.: "Давид Непобедимый - великий философ древней Армении". Ер., 1983, с. 63.

³ Գ. Ա. Մելքումյան, Լուսավորականությունը որպես պատմա-մշակութային երևույթ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1994, թիվ 4, էջ 13:

⁴ В. Ф. Пустарнаков. Философия Просвещения в России и во Франции: опыт сравнительного анализа. М., 2001 (մեջբերվում է ըստ www.vusnet.ru էլեկտրոնային գրադարանում տեղակայված նյութերի):

արդիականության արևմտյան մշակույթի ճգնաժամային իրավիճակի մեղավորների շարքում ընդգծելով ժամանակին առաջընթացի ուղեմիջ համարվող լուսավորականության դերը: «Լուսավորականությունը ամենալայն իմաստով՝ որպես մտքի առաջխաղացում, միշտ նպատակ է ունեցել մարդկանց ազատելու վախից և հաստատելու նրանց ինքնավարությունը: Բայց և այնպես լուսավորված ողջ աշխարհը ճանաչում է աղետալի հաղթանակով»⁵, գրում են նրանք: «Լուսավորականություն» հասկացության վերոհիշյալ իմաստային հարթությունների հատման կետում էլ ընթանում է լուսավորականության հիմնախնդրի քննարկումը ժամանակակից փիլիսոփայության մեջ, որտեղ լուսավորիչների կողմից ուրվագծված բանականության ինքնիրացման ծրագիրը ստանում է «մոդեռնիստական նախագիծ» անվանումը: Վերջինս արտահայտում է այն գաղափարը, որ ռացիոնալ գիտության ներուժի և բանականության խելամիտ կիրառումը վերջին հաշվով կլուծի բոլոր քաղաքական և սոցիալական խնդիրները: Սակայն պետք է նշել, որ մոդեռնիստական նախագծի իրականացման արյունքներն այնքան էլ ոգեշնչող չեն, որքան կայող են թվալ առաջին հայացքից: XX դարում մոդեռնի ծննդավայր Եվրոպայում տեղի ունեցած համաշխարհային երկու ամենասարսափազդու պատերազմներն ու բռնատիրական կարգերի իրական գործառնումը պատճառ դարձան, որ մարդկային միտքը հայտնվի տարակուսանքի մեջ. մի՞թե երբեմնի երազանքները, իրականության շեմին լինելով, մարդկությանը նորից տանում են դեպի իռացիոնալ հետադիմություն, քանզի «լուսավորված» քաղաքակրթության ստեղծած հասարակության մեջ մարդիկ կամավոր ընդունում են ֆաշիստական գաղափարախոսությունը, գիտակցաբար իրագործում են կամխամտածված ցեղասպանություն և ջանասիրաբար ընդլայնում են զանգվածային բնաջնջման զինանոցը:

Քաղաքակրթության զարգացման հետագա ընթացքում լուսավորականության ոլորտից դերի ոչ միանշանակ արժևորումը սկիզբ է դրել քննադատական ավանդույթի, որի շրջանակներում վերստին իմաստավորվում են լուսավորիչների կողմից առաջ քաշված խղետներն ու արժեքները, ընդ որում՝ արդեն իսկ կասկածի տակ է առնվում աշխարհի տեխնիկական վերափոխության նկատմամբ լուսավորականությանը բնորոշ հավատը:

XX դարի երկրորդ կեսից լուսավորականության քննադատական ավանդույթի շրջանակներում իր հաստատուն դիրքերն է ամրապնդում պոստմոդեռնիստական փիլիսոփայությունը: Առհասարակ, հետլուսավորական շրջանում հակալուսավորական տրամադրություններն առավել վառ արտահայտություն են գտնում հենց պոստմոդեռնիստական աշխարհընկալման մեջ, ուստի պոստմոդեռնիստական գաղափարախոսությունը երբեմն սահմանվում է ուղղակի որպես հակալուսավորականություն:

Պոստմոդեռնիզմի փիլիսոփայական հայեցակարգը ձևավորվել է XX դարի 60-ական թվականներին՝ կապված ժամանակակից քաղաքակրթության սոցիոմշակութային և փիլիսոփայական համատեքստերի քննադատական ռեֆլեքսիայի հետ: Լուսավորականության քննադատության հայեցակարգում պոստմոդեռնիզմի կեցութային կարգավիճակի իրավասությանը վերաբերող քննարկումների հիմքում ընկած է «մոդեռն» ու «պոստմոդեռն» հասկացությունների փոխհարաբերակցության մեկնաբանությունների բազմազանությունը: Հարկ է նշել, որ «մոդեռն» հասկացությունը վերաիմաստավորվում է վերոհիշյալ հիմնախնդրի համատեքստում,

⁵ T. W. Adorno, M. Horkheimer, *Dialectic of Enlightenment*. London-New York, 1999, p. 3.

ուստի այսօր այն միանգամայն այլ բովանդակություն ունի, քան նախքան պոստ-մոդեռնիստական տեսության ստեղծումը: Այն իր փիլիսոփայական էությունը զրտնում է XVIII դարի լուսավորականության շրջանակներում, մասնավորապես՝ բնութագրելով այնպիսի հասարակությունը, որում մարմնավորված են լուսավորականության դարաշրջանի իդեալները: «Մոդեռն» այստեղ հանդես է գալիս որպես փիլիսոփայական որոշակի միջոց, որի հենակետը լուսավորական մտածողությունն է՝ ռացիոնալության իր հիմքով: Թեև պատմականորեն այն XVIII դարի հետ է կապվում, այդուհանդերձ «մոդեռնի նախագիծը» թե՛ փառքի, թե՛ պարսավանքի իր գազաթնակետին է հասնում հենց XX դարի ընթացքում: Ուստի փիլիսոփայության արդիական խնդիրների շարքում կարևորվում է մոդեռնիզմից դեպի պոստմոդեռնիզմ տանող ուղու քննական վերլուծությունը: «Մոդեռն-պոստմոդեռն» հայեցակարգի բովանդակությամբ է որոշվում քաղաքակրթական զարգացման ներկա փուլի, արդիականության վերլուծության և արժևորման մեթոդաբանությունը: Այն առավել մեծ տարածում է հնչեղություն է ստացել արդիականության վերլուծությանն ու իմաստավորմանն ուղղված այն փիլիսոփայական, մշակութաբանական և սոցիոլոգիական հայեցակարգերում, որոնցում, մասնավորապես, քննարկվում է այն հարցը, թե ներկայումս հասարակական զարգացումն ինչ փուլ է ապրում, արդյո՞ք այն դեռևս ընթանում է «մոդեռնիստական նախագծի» զարգացման սահմաններում, թե՞ մոդեռնը վարուց արդեն ավարտված փուլ է, և ներկայումս հասարակական զարգացումն ընթանում է նոր՝ պոստմոդեռնիստական փուլի շրջանակներում: Գլխավոր խնդիրը նաև այն հարցն է, թե արդյո՞ք պոստմոդեռնը՝ այստեղ՝ հետլուսավորական դարաշրջանը, և պոստմոդեռնիզմը՝ որպես նրա գաղափարախոսական արտահայտություն, իրոք, նոր մշակութային ու սոցիալական ձևեր են, թե՞ նրանք միայն անցումային որոշակի երևույթներ են, իսկ իրական հետմոդեռնյան հասարակությունն ու նրան համապատասխանող աշխարհագրագոյությունը դեռ առջևում են:

Փիլիսոփայական ու մշակութաբանական մտքի շրջանակներում մոդեռնի և պոստմոդեռնի հարաբերակցությանը վերաբերող կարծիքների տարամիտման հիմքերը պայմանավորված են հասկացության երանգային բազմիմաստության թյուրըմբռնումներով: Ընդհանուր առմամբ կարող ենք առանձնացնել երկու հիմնական մոտեցում՝

ա) պոստմոդեռնիզմը մոդեռնիզմի հետագա զարգացումն ու նրա հիմնադրույթների ամրապնդումն է,

բ) պոստմոդեռնիզմը մոդեռնիզմի հերքումն ու հաղթահարումն է և վերադարձը դասականությանը:

Այսինքն՝ «մոդեռն-պոստմոդեռն» փոխհարաբերակցությունը քննարկող հայեցակարգերը տարամիտվում են հետևյալ հարցի պատասխաններում՝ արդյո՞ք մոդեռնն ավարտվել է: Մի դեպքում հարցի դրական պատասխանն արձանագրում է նոր՝ պոստմոդեռնիստական փուլի գալուստը, որը հաջորդում է մոդեռնիզմին: Հարցի բացասական պատասխանի դեպքում քաղաքակրթության զարգացման ներկա փուլը մեկնաբանվում է որպես մի փուլ, որտեղ մոդեռնիստական միտումներն ամբողջական մարմնավորում ու ծայրահեղ զարգացում են ստանում: Այս դեպքում ընդունվում է, որ պոստմոդեռնիզմի զարգացումը ընթանում է մոդեռնիստական նախագծի շրջանակներում: Այսպես, օրինակ, խոսելով մոդեռնիստական նախագծի անավարտության մասին՝ Յ. Հաբերմասը պահպանում է լավատեսությունը նրա ապագայի նկատմամբ՝ համարելով, որ մեր ժամանակներում լուսավորական նախագիծը, դրական արդյունքներ տալով, դեռևս չի սպառել իր ներուժը: Նա արդիականությունը զնահատում է «լուսավորականության անավարտ նախագծի» տե-

սանկյունից և այն բնութագրում որպես «պատմության մեջ բանականության ձևախեղման իրականացում»⁶: Ըստ էության, Հաբերմասը նկատի ունի այն, որ «լուսավորականության նախագիծը» մենախոսող բանականության նախագիծ է, որին հաջորդելու եկող բանականությունը պետք է ազատվի իր մենախոսական բնույթից, սովորի քննադատել, հարցադրել, փոփոխել սեփական հիմքերը, դիսկուրս վարել: Նա չի պարզաբանում, թե ինչու մոդեռնիզմը չի ավարտվել, թե երբ և ինչպես այն կրկին կապրի իր «աստեղային պահը»: «Մոդեռնի անավարտ նախագիծ» նկատմամբ Յ. Հաբերմասի լավատեսական հայացքներին հակադրվում է ֆրանսիացի հայտնի պոստստրուկտուրալիստ Ժան-Ֆրանսուա Լիոթարը, որը պնդում է, որ այդ նախագիծը ոչ թե աղավաղվել է, այլ լիովին ձախողվել: Պոստմոդեռնիզմի կեցութային իրավասության սահմանմամբ հանդես եկող այս մտածողի համար պոստմոդեռնիզմը ամենևին էլ մոդեռնիզմի հակաթեզը չէ, այլ «այն, իհարկե, մտնում է մոդեռնի մեջ»⁷: Նրա փյլիստփայական հայեցակարգում պոստմոդեռնիզմը ո՛չ մոդեռնիզմի վերջն է, ո՛չ էլ նոր դարաշրջան, այլ ներկայացնում է մոդեռնիզմն իր հերթական նորացման փուլում, այսինքն՝ մոդեռնը շարունակում է հիմնովին զարգանալ պոստմոդեռնիզմի հետ: Հետևաբար, պոստմոդեռնի հարաբերությունը պատմության նկատմամբ հատուկ բնույթ ունի, այն ապրում է ոչ թե նախորդի կույր հերքումով, այլ նկատի ունի ոչ միաժամանակի իրական միաժամանակայնությունը⁸:

Վ. Կուտիրյովի տեսանկյունից պատմության փաստական տրամաբանությանն առավել համապատասխանում է այն դիրքորոշումը, որ «մեր ժամանակը մոդեռնիզմի ունիվերսալիզացիայի և արմատականացման, նրա՝ նոր որակի անցման դարաշրջան է մինչև իսկ նրա վերածմանը հիպեր-գեր-ուլտրա-մոդեռնիզմի»⁹: Նման դիրքորոշման կողմնակիցներից է նաև Էնթոնի Գլոդենսը, որն արդիականության հասարակական դրությունը սահմանում է որպես «արմատականացված մոդեռն», ուշ այդիականություն: «Ներկայումս մենք ապրում ենք «բարձր մոդեռնի» շրջանում»¹⁰, - գրում է նա՝ համարելով, որ պոստմոդեռնը ոչ թե հաղթահարում, այլ շարունակում է մոդեռնիստական նախագիծը:

Այսպիսով՝ բնդհանուր առմամբ գործ ունենք պոստմոդեռնիզմի երկու մեկնաբանության հետ.

1. պոստմոդեռնիզմը՝ որպես մոդեռնի հաղթահարում,
2. պոստմոդեռնիզմը՝ որպես մոդեռնի շարունակություն:

Պոստմոդեռնիստական առաջին բանավեճերը սկսվել են լուսավորականության դարաշրջանի և «մոդեռնիստական նախագիծ» քննադատությամբ: Ամենաընդհանուր գծերով դրանց բոլորի հիմքում այն լուրջ նախազգուշացումն է, որ եթե մարդկությունը շարունակի ապրել մոդեռնի օրենքներով ու սկզբունքներով, ապա կվտանգվի ողջ երկրագնդի հետագա գոյությունը: Այսինքն՝ «մոդեռնիստական նախագիծ» նկատմամբ հիմնական մեղադրանքն արդիականության գլոբալ հիմնախնդիրների ծագումն է: Պոստմոդեռնիզմը որպես լոկ մոդեռնի բացառում

⁶ Ю. Хабермас. Демократия. Разум. Нравственность. М., 1995, с. 399.

⁷ Ж.-Ф. Лиотар. Ответ на вопрос: что такое постмодерн? М., 1994, с. 320.

⁸ Stéu “Введение в культурологию. Курс лекций” / Под. ред. Ю. И. Соколова, Е. Г. Соколова. СПб., 2003, էջ 126:

⁹ В. А. Кутырев. Философия постмодернизма. Нижний Новгород, 2006, (մեջբերվում է риаռ www.gumer.info էլեկտրոնային գրադարանում գետեղված նյութերի):

¹⁰ А. Гидденс, Постмодерн. // Философия истории. Антология. М., 1995, էջ 340.

դիտարկելը բարդ պատմամշակութային երևույթը հանգեցնում է ուղղակի նախորդ դարաշրջանի բացասական քննադատական տեսության մակարդակին, ինչի արդյունքում թերագնահատվում և անգամ անտեսվում են պոստմոդեռնիզմի տեսական, ճանաչողական և մեթոդաբանական հնարավորությունները:

Չնայած պոստմոդեռնիզմի վերոհիշյալ երկու մեկնաբանություններին՝ այն պահպանում է լուսավորականության նկատմամբ իր քննադատական վերաբերմունքը: Առաջին մեկնաբանության ժամանակ գործ ունենք լուսավորականության քննադատական ավանդույթի արմատական, հերքողական տարբերակի հետ, իսկ երկրորդ դեպքում՝ լուսավորականության չափավոր քննադատության հետ, որն առավելապես կառուցողական միտումներ է հետապնդում: Ինչևէ, պոստմոդեռնիստական բոլոր հայեցակարգերն իրենց բազմազանությամբ հանդերձ փաստում են, որ պոստմոդեռնիստական գաղափարախոսության գլխավոր գործառույթը արևմտյան գիտակցության քննադատությունն է:

Պոստմոդեռնիզմն իր ծագմամբ արդեն պարտական է լուսավորական ավանդույթների նկատմամբ քննադատական դիրքորոշման ձևավորմանը: Նրա հակալուսավորական միտվածության արմատները գալիս են XIX-XX դարերի սահմանագծում բնագիտական պատկերացումների բեկման դարաշրջանից, ելք էականորեն խարխլվում են ինչպես պոզիտիվիստական գիտական գիտելիքի հեղինակությունը, այնպես էլ ռացիոնալիստորեն հիմնավորված մշակութային ավանդույթները: Արժեքային ճգնաժամի այս զգացումը ժամանակի հետ վերաճում է արևմտյան ռացիոնալիզմի ուղջ ավանդույթի հերքմանը, ավանդույթ, որը գալիս է Արիստոտելից, հռոմեական տրամաբանությունից, միջնադարյան սխոլաստիկայից և իր վերջնական մարմնավորումն է գտնում դեկարտյան փիլիսոփայական հայեցակարգում:

Պոստմոդեռնիզմն իր հակալուսավորական մտորումների թիրախ է դարձնում լուսավորական աշխարհայացքին բնորոշ ունիվերսալիզմի հայեցակարգը: Ներկայումս պոստմոդեռնիզմը՝ որպես լուսավորականության քննադատություն, իր աշխարհայացքային-մեթոդաբանական բազմարժեքությամբ (պլյուրալիզմով) հանդես է գալիս հասարակական հարաբերությունների գլոբալացման գործընթացների դեմ, որոնք հիշեցնում են լուսավորականության ունիվերսալիստական հավակնությունները: Վերջիններս կապված են համամարդկային արժեքներով միավորված քաղաքակրթության գաղափարի հետ: XX դարում լուսավորականության ունիվերսալիստական հայեցակարգը սպառում է իր կենսունակությունը: Առհասարակ՝ հակալուսավորական բոլոր հայեցակարգերը լուսավորականության ունիվերսալիստական նկրտումներում քողարկված դոգմատիզմի վտանգ են տեսնում:

Պոստմոդեռնիզմը կապված է փիլիսոփայական հայեցակարգերի արմատական վերափոխման հավակնության հետ, որն ուղեկցվում է արևմտաեվրոպական նախորդ ավանդույթին հատուկ պանլոզիզմի, ռացիոնալիզմի, օբյեկտիվիզմի և պատմականության խորն ու բազմակողմանի քննադատությամբ: Պոստմոդեռնիստական հակալուսավորականության գլխավոր թիրախը արևմտյան ռացիոնալիզմն ու տրամաբանակենտրոնությունն է: Փիլիսոփայական մտքի պատմության մեջ ռացիոնալ աշխարհայեցողության զարգացումը համակարգաստեղծ նշանակություն է ունեցել լուսավորականության երևույթի հաստատման համար: Ռացիոնալությունը հռչակելով գիտելիքի, բարոյագիտության և գեղագիտության ամուր համակարգ ստեղծելու միջոց՝ լուսավորականությունը հանդես է գալիս հասարակական կյանքի բոլոր ոլորտների ռացիոնալացման կոչով՝ ելնելով այն համոզմունքից, որ ռացիոնալ գիտելիքն ի վերջո մարդկությանը պետք է ազատի սոցիալական

ու քնական ստրկությունից: Այսինքն՝ լուսավորիչների հիմնական խնդիրն ու նպատակը դրզմատիկ ավանդույթների հաղթահարումն էր ռացիոնալիստական աշխարհընկալման միջոցով: Լուսավորականության դարաշրջանի ողջ պարթուն անսահման հավատն ու վստահությունն էր մարդկային բանականության հզորության, նրա անսահման հնարավորությունների, գիտական առաջընթացի նկատմամբ, որը երաշխիքներ կապահովեր տնտեսական, սոցիալական ու բարոյաստեղծական բարեկեցության համար: Եվ, ի վերջո, բավական է մեջբերել լուսավորականության կանոնային սահմանումը, որպեսզի առավել ակնառու դառնա, թե ինչպիսի իրավասություն էր վերագրվում բանականությանը լուսավորական մշակույթի շրջանակներում: Գերմանացի խոշորագույն մտածողը լուսավորականություն ասելով նկատի է ունենում անչափահասության վիճակից մարդկության դուրս գալը, որում նա գտնվում է սեփական մեղքով: Իսկ անչափահասությունը նա սահմանում է որպես «անկարողություն օգտվելու սեփական դատողականությունից՝ առանց կողքից որևիցե մեկի ղեկավարության»¹¹: Ընդ որում, Կանտի կարծիքով, սեփական մեղքով անչափահասության պատճառը դատողականության պակասը չէ, այլ «առանց կողքից որևիցե մեկի օգնության դրանից օգտվելու վճռականության ու համարձակության պակասը»¹²: Ուստի նա լուսավորականության նշանաբան է դարձնում *Sapere aude* արտահայտությունը, որը տվյալ դեպքում նշանակում է՝ «քաջություն ունեցիր օգտվելու սեփական դատողականությունից»¹³: Ըստ էության լուսավորականության կանոնային սահմանումը բնութագրում է լուսավորիչների անսահման, երբեմն նույնիսկ պարզամիտ հավատը մարդկային բանականության, գիտելիքի ու հասարակական առաջընթացի նկատմամբ: «Բանականության պաշտամունքը լուսավորիչների մոտ ենթադրում էր գիտական ու տեխնիկական ճանաչողության ջատագովություն՝ որպես աշխարհի վերափոխման ու մարդկության նյութական ու հոգևոր կյանքի պայմանների աստիճանական բարելավման գործիք...»¹⁴: XVIII դարի բանականությունը «բնածին գաղափարների» ամբողջություն չէ և ոչ էլ իրերի բացարձակ էության արտահայտություն, դա ոչ թե տիրապետում է ենթադրում, այլ նմանում, յուրացում: Ընդհանուր առմամբ՝ բանականությունը լուսավորականության շրջանում ստանում է երկակի կարգավիճակ, մի կողմից այն հասկացվում է որպես իմացության բարձր պարտով լի սկիզբ, բայց մյուս կողմից այն մեկնաբանվում է որպես ճշմարտության ձեռք բերման միջոց՝ գործիք: Հանդես գալով հարաբերապաշտության դիրքերից՝ պոստմոդեռնիզմն իր քննադատության սլաքն ուղղում է արևմտյան «գործիքային» և պրագմատիկ բանականության դեմ, որն ըստ նրա վերածվել է գոտ դատողականության, «հաշվարկող մտածողության»: Պոստմոդեռնիստական հայեցակարգերը ելնում են այն համոզմունքից, որ ռացիոնալ մտածողությունն ի վերջո ենթադրում է իշխանական հարաբերություն ինչպես իրերի, այնպես էլ սոցիալական ոլորտում, այսինքն՝ ռացիոնալ ճանաչողությունը ենթադրում է գործնական նպատակներով իմացության օբյեկտների վերահսկողության և ձեռնածության (մանկալույցացման) հնարավորություն: Ռացիոնալության սկզբունքը պոստմոդեռնիստական հակալուսավորականության շրջանակներում դիտվում է

¹¹ И. Кант. Ответ на вопрос: что такое Просвещение? // И. Кант. Сочинения. Т. 6, М., 1966, с. 27.

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Дж. Реале, Д. Антисери. Западная философия от истоков до наших дней. Книга 3, М., 2002 (մեջբերվում է ըստ www.gumer.info էլեկտրոնային գրադարանում տեղակայված նյութերի):

որպես «բանականության կայսերապաշտական» հավակնությունների դրսևորում, քանզի այն սահմանափակում է մտքի և երևակայության ինքնաձիգ աշխատանքը, որի հիմքում ընկած են ենթագիտակցական ու անգիտակցական ուժերը:

Պոստմոդեռնիզմի հակալուսավորական մյուս մտայնությունը վերաբերում է գիտական գիտելիքի որոշում առաջընթացի կամ աճի, ինչպես նաև սոցիալ-պատմական զարգացման գաղափարի բացասական գունավորմանը: XX դարը վկայեց լուսավորականության շատ խղետներ և արժեքների աղավաղման կամ ձախողված իրականացման մասին: Նախորդ դարաշրջանը նշանավորվեց այնպիսի քանակությամբ աննախադեպ աղետներով (ռազմական, տնտեսական, քաղաքական, բնապահպանական, բարոյական և այլ ոլորտներում), որ անխուսափելի դարձավ առաջընթացի գաղափարի կենսունակության իմաստազրկումը: Բանականության գործողության նկատմամբ անսահման հավատքով տոգորված գիտատեխնիկական աննախադեպ առաջընթացը մարդու կենսագործունեության մեջ իր դրական նշանակությամբ հանդերձ՝ հանգեցրեց խորը ճգնաժամային երևույթների հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Նոր դարաշրջանի սկզբում մարդկային մտքի առջև հառնում են սկզբունքորեն նոր հիմնախնդիրներ, որոնք կապված են արդիականության գլոբալ հիմնախնդիրների համատեքստում պատմական գործընթացում մարդու տեղի ու դերի վերաիմաստավորման անհրաժեշտության հետ: Ի սկզբանե համուն մարդկային բարեկեցության ստեղծված քաղաքակրթությունը մենամեծ սպառնալիքն է դառնում ոչ միայն մարդկության «լուսավոր ապագայի», այլև, առհասարակ, «որևէ ապագայի» համար: Ուստի զարմանալի չէ, որ XX դարի լեյտմոտիվը ոչ թե առաջընթացի գաղափարն է, այլ՝ ճգնաժամի: Պոստմոդեռնիստական գաղափարախոսության տեսանկյունից որքան մարդկությունն առավել մեծ համառությամբ է փորձում մարմնավորել Բանականության, Գիտության և Ճշմարտության իդեալները, այնքան ավելի է համակվում ճգնաժամի, անազատության և օտարման զգացողությամբ: Պոստմոդեռնիզմի փիլիսոփայական հայեցակարգի շրջանակներում լուսավորականության քննադատության հիմքը փիլիսոփայական հարաբերապաշտությունը, սկեպտիցիզմն ու առհասարակ գիտելիքի օբյեկտիվ բովանդակության հանդեպ էպիստեմոլոգիական կասկածն է: Ընդհանուր առմամբ՝ լուսավորականության նկատմամբ պոստմոդեռնիստական վերաբերմունքի հիմքում ընկած է ժխտողականությունը (նիհիլիզմը): Տվյալ դեպքում վերջինս, ճիշտ է, ապակառուցողական մեթոդաբանություն է, սակայն դեռևս չի մշակել սեփական գիտական կողմնորոշիչներն ու չափանիշները, մեթոդաբանական հիմքերը:

Պոստմոդեռնիստական աշխարհընկալման սահմանման և մեկնաբանությունների առանցքն այն համոզմունքն է, որ այն հակադրվում է լուսավորական աշխարհայացքին: Սակայն վիճարկելի կարող է լինել նաև այն թեզը, որ պոստմոդեռնիզմը ոչ թե լուսավորականության քննադատություն է, այլ նոր շրջանի այն պատկերացման, որն ընդունում է հավաստի, անհրաժեշտ ու հիմնավորված վերջնական ճշմարտության ոչ միայն հնարավորությունը, այլև առկայությունը: Լուսավորականությունը քննադատում է դոգմատիկ մտածողությունը և քննադատական ռեֆլեքսիայի կոչ անում: Կանտյան հայտնի լոգունզը՝ Sapere aude, կոչ էր անում համարձակություն ունենալ ինքնուրույն կյուռեղյու սեփական բանականությունը: Լուսավորականության կոչը ոչ թե բացարձակ ճշմարտությունների բացահայտումն ու հավերժականացումն էր, այլ ճշմարտությունների հարաբերականության, այսինքն՝ սեփական մտածողության միջոցով դրանց քննադատական հաստատման ընդունումը: Լուսավորականության հիմքում ևս այն համոզմունքն էր, որ տրանս-

ցենդենտալ ճշմարտությունները, իրոք, առկա են, և նրանց բնույթն ու բովանդակությունը մշտապես նույնը կմնան՝ անդրադառնալով ու արձագանքելով յուրաքանչյուրի բանական հոգում: Այս տեսանկյունից պոստմոդեռնիզմը՝ որպես մտածողության ոճ և փիլիսոփայման ինքնատիպ մեթոդաբանություն, կարող է դիտվել որպես լուսավորական մտածողության ծայրահեղականացում, քանզի եթե լուսավորականությունը ուղղակի կոչ է անում սեփական ինքնավար բանականության քննադատական ռեֆլեքսիայի միջոցով հաստատել ցանկացած գիտելիք, ապա պոստմոդեռնիզմն արդեն «ճշմարտացում է» այդ դրույթն ու դրանով իսկ հերքում այն՝ ընդունելով ցանկացած ճշմարտության հարաբերականությունը: Եթե լուսավորականությունն ասում է՝ ինքնուրույն մտածիր ու անպայման, աներկբայորեն կգաս գիտելիքի ըմբռնանը, ապա պոստմոդեռնիզմը ևս ասում է՝ ինքնուրույն մտածիր, ինչպես կցանկանաս, սակայն նրան չի հետաքրքրում վերջնական արդյունքների համապատասխանությունը իրականությանը, այսինքն՝ այս առումով ըստ էության պոստմոդեռնիզմը լուսավորական հոռետեսություն է հիշեցնում: Ուստի շատ կարևոր է լուսավորականության և պոստմոդեռնիզմի հարաբերակցության մեջ խիստ սահմանագծել նաև լուսավորականության շրջանակները:

Անփոփելով կայաղ ենք ասել, որ պոստմոդեռնիստական փաստարկները անհնար է միանշանակորեն արժևորել, քանզի հենց այդ մտածելակերպն արդեն հերքում է ցանկացած տիպի փաստարկների առաջադրման հիմնավորվածությունը: Ուստի «պոստմոդեռնիզմի փիլիսոփայությունը» չի կարելի դիտել որպես առանձին, ինքնատիպ հասկացական սպարատ ունեցող փիլիսոփայական ուղղություն: Ընդհանուր առմամբ՝ այն հանդես է գալիս որպես արևմտյան քաղաքակրթության ինքնագիտակցության մեջ հուզող շրջադարձի բազմաչափ տեսական արտացոլում: Քննադատելով նոր և նորագույն շրջանների գիտական տեսությունների համակարգայնությունն ու կառուցվածքայնությունը՝ պոստմոդեռնիզմը ստեղծում է աշխարհի մասին գիտելիքի ձևակերպման նոր մոդել՝ հասարակական արտահայտության՝ դիսկուրսի ձևով: Բացի այդ, այս մտածելակերպը լուսավորականության նկատմամբ իր անվերապահ քննադատությամբ շնքից մերժում է լուսավորական աշխարհընկալումը՝ անգամ չփորձելով փիլիսոփայական ռեֆլեքսիայի ենթարկել նրա հիմնարար սկզբունքներն ու արժեքները: Այս տեսանկյունից պոստմոդեռնիստական հակալուսավորականությունը, սահմանափակվելով սեփական շրջանակներով, սպառում է իր քննադատական գաղափարախոսության ուժը: Ի վերջո, նրան հատուկ արմատական պլյուրալիզմը ի չիք դարձնելով գնահատման և արժևորման քիչ թե շատ օբյեկտիվ ցանկացած չափանիշ՝ ուղղակի նպաստում է արժեքային ճգնաժամի պահպանմանն ու էլ ավելի խորացմանը: Ուստի, չնայած փիլիսոփայության տեսանկյունից այն համարվում է հետլուսավորական շրջանի գերիշխող մշակութային հայեցակարգ, ներկայումս սպառում է նույն ուղով իր գարգացման հեռանկարները: Հետևաբար, պոստմոդեռնիզմի արժևորումը գլխավորապես պետք է ընթանա նրա՝ որպես անցումային որակի բնութագրության շրջանակներում: Իր մեջ կրելով հնի սպառվածության և նորի անկանխատեսելիության զգացումը՝ այն հանդես է գալիս ավելի շուտ որպես հակամոդեռնիզմ, որը միջանկյալ օղակ է դեպի իրական պոստմոդեռնիզմ տանող ճանապարհին:

Եթե պոստմոդեռնիզմն իր գաղափարախոսությամբ հանդես է գալիս որպես հակալուսավորականություն, ապա նույնը չենք կարող ասել պոստմոդեռնի մասին, քանզի վերջինս խորիրոգանշում է սոցիումալիզմի մի դարաշրջան, որտեղ առկա են ինչպես հակալուսավորական, այնպես էլ լուսավորականության գաղափարախոսության հանդեպ ջատագովական միտումներ: Լուսավորականության ջատա-

գովական մտքի դիրքերն են անցնում մասնավորապես այն մտածողները, ովքեր անհանդուրժող են պոստմոդեռնիստական մտքի վայրիվերումների հանդեպ: Այսինքն՝ այստեղ այլընտրանքային ընտրության պատրանք է ստեղծվում մի կողմից լուսավորական արժեքների, իսկ մյուս կողմից ցանկացած մնալուն արժեքների հնարավորության պոստմոդեռնիստական հերքման միջև: Իհարկե, պոստմոդեռնիստական մտքի քննադատությունը չի նույնանում լուսավորականության ջատագովության հետ, սակայն չենք կարող հերքել, որ ի վերջո փիլիսոփայական մտքի հետագա զարգացման ուղիների որոնումներում այն կարող է ակամա տանել դեպի ետ՝ դեպի լուսավորական ավանդույթներ: Այսինքն՝ այս դեպքում պոստմոդեռնիզմի գաղափարախոսության՝ քննադատության հաղթահարման միջոցներից մեկն էլ դասական փիլիսոփայական ավանդույթների վերածնունդն է:

Պոստմոդեռնիզմի համատեքստում լայն տարածում գտած լուսավորականության քննադատական ավանդույթը, այնուամենայնիվ, չի հերքում նրա նշանակությունը քաղաքակրթության հետագա զարգացման գործընթացում: Ինչպես արդիականության ճշգրիտ վերլուծության և արժևորման, այնպես էլ մայրկային քաղաքակրթության հետագա ընթացքը կանխորոշելու և հնարավորինս ուղղորդելու առումով պետք է կրկին խմաստավորենք լուսավորականության նախադրյալներն ու լուսավորականության նախագծի ճակատագիրը գալիք ժամանակներում:

Է. Յ. ТАДЕВОСЯН — *Критика Просвещения в философской концепции постмодернизма.* — В статье рассматривается специфика критики Просвещения как историко-культурного феномена в философской концепции постмодернизма. При этом легитимность бытийного статуса постмодернизма в рамках критики Просвещения обсуждается, основываясь на интерпретации соотношения модерна и постмодерна. В статье подтверждается мысль о том, что как критика Просвещения постмодернизм со своим мировоззренческим, методологическим плюрализмом выступает против процессов глобализации социальных отношений.